

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРЦАХ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ И СПОРТА  
УНИВЕРСИТЕТ МЕСРОП МАШТОЦ

THE REPUBLIC OF ARTSAKH  
THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE AND SPORT  
MESROP MASHTOTS UNIVERSITY

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ  
СБОРНИК СТАТЕЙ КОНФЕРЕНЦИИ  
SET OF CONFERENCE ARTICLES

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝  
նվիրված Մեսրոպ Մաշտոց Համալսարանի գործունեության  
20-ամյակին

*ԿՈՎԿԱՍՆ՝ ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈՒՆ*

МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ,  
посвященная 20-летию деятельности  
Университета Месроп Маштоц

*КАВКАЗ – НАШ ОБЩИЙ ДОМ*

INTERNATIONAL SCIENTIFIC CONFERENCE  
DEVOTED TO THE 20<sup>TH</sup> ANNIVERSARY OF MESROP MASHTOTS UNIVERSITY

*CAUCASUS – OUR COMMON HOME*

27-29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ  
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 2017

27-29 ОКТЯБРЯ  
СТЕПАНАКЕРТ 2017

27-29 OCTOBER  
STEPANAKERT 2017

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝  
Համանախագահ՝

Ղ.Ս.Գաբրիելյան, ՄՄՀ ռեկտոր, մ.գ.թ., ՄՄՀ պրոֆեսոր (Արցախ)  
Ղ.Ս.Բաբայան, փ.գ.թ., ՄՄՀ պրոֆեսոր (Արցախ)

Վ.Ռ.Բալայան  
Ս.Ա.Խանյան  
Ս.Շ.Ծաղիկյան

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի փոխնախագահ, պ.գ.դ., պրոֆեսոր  
ԱրՊՀ և ՄՄՀ պրոֆեսոր, բ.գ.դ.  
ՀՌՀ քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ,  
ի.գ.դ., պրոֆեսոր

Ա.Ս.Ծպենցյան  
Վ.Ն. Կոնովալով

ՀՀ պետական կառավարման ակադեմիա, տ.գ.թ., դոցենտ  
ՀՂՀ, Սոցիոլոգիայի և տարածաշրջանագիտության ինստիտուտի կոնֆլիկտոլոգիայի և  
ազգային անվտանգության ամբիոնի փ.գ.թ., պրոֆեսոր

Վ.Զ.Հակոբյան  
Է.Ա.Հայրապետյան  
Լ.Շ.Հովհաննիսյան  
Լ.Գ. Ղարախանյան

ՊՊԼՀ պ.գ.թ., դոցենտ, ՄՄՀ պատվավոր պրոֆեսոր  
ՄՄՀ պրոռեկտոր, մ.գ.թ., դոցենտ  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր  
ԱՀ ԿԳՄՆ, հ.գ.թ., դոցենտ

Է.Գ.Մինասյան  
Լ.Ա.Միրզոյան  
Վ.Ս.Պետրոսյան

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆեսոր  
ՀՃՇԱՀ, մանկ. գիտ. թեկ., դոցենտ  
ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ, ԵՊՀ  
հայ-քրդական առնչությունների բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Ս.Ա.Պողոսյան

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկանի  
տեղակալ, պ.գ.դ.

Ս.Պ.Պոգեյուն

ՀՂՀ, Փիլիսոփայության և հասարակա-քաղաքական  
գիտությունների ինստիտուտի տեսական և կիրառական քաղաքագիտության ամբիոնի  
պրոֆեսոր, ք.գ.դ.

Գ.Ս.Քեչյան

ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, ք.գ.դ.,  
պրոֆեսոր

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель:  
Сопредседатель:

Д.С.Габриелян, ректор УММ, к.п.н., профессор УММ  
Г.М.Бабаян, к.филос.н., профессор УММ

Ճ.Ա.Այրապետյան  
Յ.Յ.Առաքելյան  
Յ.Ր.Բալայան  
Լ.Գ.Կարախանյան  
Գ.Մ.Կերյան  
Յ.Ն.Կոնովալով

կ.պ.ն., доцент, проректор УММ  
ПГЛУ, к.ист.н., доцент, почетный профессор УММ  
вице-спикер Национального Собрания РА, д.и.н., профессор  
МОНС РА, к.п.н., доцент  
Заведующий кафедрой политических институтов и процессов ЕГУ, д.п.н., профессор.  
профессор кафедры конфликтологии и национальной безопасности Института социологии и  
регионоведения ЮФУ, д.ф.н.

Ճ.Գ.Մինասյան  
Լ.Ա.Միրզոյան  
Լ.Ս. Օգանեսյան  
Յ.Ս.Ստեփանյան

декан исторического факультета ЕГУ, д.и.н., профессор  
НУАСА, к.п.н., доцент  
Член-корреспондент НАН РА, профессор  
заведующий кафедрой международных отношений и дипломатии ЕГУ, руководитель отдела  
армяно-курдских отношений ЕГУ, к.и.н., доцент

Ս.Ա.Ստեփանյան  
Ս.Ս.Ստեփանյան

заместитель декана факультета истории и правоведения АГПУ им.Х.Абовяна, д.и.н.  
профессор кафедры теоретической и прикладной политологии Института философии и  
социально-политических наук, ЮФУ, д.п.н.

Ս.Ա.Ստեփանյան  
Ս.Ս.Ստեփանյան  
Ա.Ս.Ստեփանյան

д.ф.н., профессор АрГУ и УММ  
зав.кафедрой уголовного права и уголовно-процессуального права РАУ, д.юр.н., профессор  
Академия государственного управления РА, к.э.н., доцент

ՀՏԳ 378:06  
ԳՄԴ 74.58  
Կ 767

Կովկասը՝ մեր ընդհանուր տուն: Միջազգային գիտաժողով՝  
Կ 767 նվիրված Մեսրոպ Մաշտոց համալսարանի գործունեության 20-ամյակին:  
Ստեփանակերտ: «Դիզակ պլուս» հրատ., 2017.- 508 էջ:

Настоящий сборник статей по итогам международной научной конференции, проходившей в Университете Месроп Маштоц города Степанакерта (27-29 октября 2017 года), представляет собой результат сотрудничества ученых Арцаха, Армении и других стран СНГ. Участники конференции представили свое видение и анализ актуальных вопросов гуманитарного, экономического и социально-политического развития региона.

ՀՏԳ 378:06  
ԳՄԴ 74.58

**ԲԱՏՅՈՒՒ «ԽԱՄՄԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»  
ԵՐԿԻ ԿԵՐՊԱՐԱՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

**Զինախոս Բալայան  
Բ. Գ. Թ., դոցենտ, ԱրՊՀ  
Արցախ**

***Անտառագիտություն:** Ուսումնասիրության նպատակադրումը, մեր կարծիքով, արժեւորվում է որպես հայագիտական-արցախագիտական մտքի նորովի դրսևորում, քանի որ, ինչպես պահմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկասիրությունը, այնպես էլ Բաժնի «Խամսայի մեղիքությունները» պատմական ուսումնասիրությունը հայ ժողովրդի, արցախահայության համար դասագրքային ու գիտական, պատմական, գրական մեծ արժեք է ստանում:*

*Աշխատանքն ամբողջությամբ նորովի քննել ենք վերագնահատման մեթոդով մեկնելով Բաժնի այդ երկի գաղափարախոսական հիմնական ուղղվածությունը եւ նշելով Խամսայի մեղիքությունների կործանման քաղաքական դրդապատճառները:*

***Բանալի բառեր՝** 18-19-րդ դարեր, Արփիար Արփիարյան, «Խամսայի մեղիքությունները», հայ հեղինակ, Բաժնի, տաղանդավոր պատմաբան, ռոմանտիկ, Մովսես Խորենացի, հաղթանակ, կռիվ, ազգային գաղափարախոսություն:*

Հայ գրականության ներկայացուցիչները, նկատի ունենալով ժողովրդի ճակատագրի բարդ յուրահատկությունները, տարբեր ժամանակներում նրա պատմության բացահայտումները կատարելիս, եւ իրենց երկերը գրելիս ո՛չ միայն հենվել են ժողովրդական բանավոր հյուսվածքների, ավանդությունների տված տեղեկությունների, ա՛յլեւ պատմության հավաստի փաստերի հիման վրա հավաքված գրավոր ու բանավոր եւ այլ աղբյուրների վրա:

Ո՛չ միայն վիպական, ա՛յլեւ պատմական փաստն է վավերացնում երեւույթի հավաստիությունը:

Սկսած մեհենական պատմագիր Օղյումպ Քուրմից, պատմահայր Մ. Խորենացուց մինչեւ արդի ժամանակաշրջանի ստեղծագործողներ, հայ գրականության մշակները այդ կերպ են ստեղծել-գրել իրենց պատմությունները: Հեթանոսական շրջանի առասպելներին, վիպական կտորներին անդրադառնալիս Մ. Խորենացին դրանք բաժանել է երկու խմբի՝ պատմական եւ առասպելական հիմք ունեցողներ:

Վիպականը՝ աներեւակայելին, անհավանականը, ստեղծագործական տարրերով ստեղծվածը, ժողովրդական ասացումներով են հատկանշվում, դառնում սքանչելի հյուսվածք հայ մարդու առտնին ու սոցիալական կյանքի, պայքարի, հավատալիքների, սովորությունների, բանաստեղծական լուծումների, կրոնական պատկերացումների, ներքին ու արտաքին բռնադատիչների վատագույն հատկանիշների մասին ստեղծված կտորներ:

Եվ եթե գիտությունը որեւէ երեւույթի իրողության չափը, հավաստիությունը պետք է հաստատի, ապա կարելու գործոն է դառնում պայմանականորեն ճիշտ դիտված երեւույթը: «Հայտնի բան է, միայն ժողովրդական ավանդությունների վրա հիմնվելով, շատ դժվար կլինեք կազմել մի քանի դարերի շարունակ պատմությունը»,- գրում է Բաժնի,- «ժողովուրդը շատ անգամ շփոթում է անցքերը. մեկի գործողությունը մյուսին է վերաբերում, և ամենադժվարինն այն է, որ ժամանակագրական և տոհմագրական ճշգրտություններ չէ պահպանում...: - Հենց այս ճշմարտությունից էլնելով է, որ շարադրանքին հավաստիություն տալու համար փաստացի, գրավոր աղբյուրներն են օգնության գալիս,- ժողովուրդը ունի իր լեզուները, իր իդեալները, իր սիրած հերոսները, որոնց ընծայում է նա այնպիսի մեծագործություններ, որոնք նրանց կատարածը չէին կարող լինել: Օրինակ,- շարունակում է վիպագիրը,- ինձ շատ անգամ պատահում էր նկատել, որ միևնույն պատմական իրողությունը ամեն մի գավառի ավանդությունների մեջ ընծայում էին նույն գավառի մի հայտնի հերոսին...Բայց պատմական փաստը դարձյալ մնում է իբրև իրողություն, միայն հարկավոր է նրա կատարող տերը գտնել»[1, էջ 378-379]:

Ինչպես Խորենացին «Հայոց պատմությունը» գրելիս, նույնպես Բաժնին «Խամսայի մեղիքությունները» շարադրելիս վիպականի, բանահյուսականի հետ շեշտադրել է Արցախի

պատմական փաստի գործոնը նաև, որովհետև հայոց պատմությունն ու նրա անբաժան մաս կազմող մեկիքությունների ժամանակի պատմությունը ոչ միայն ազգային արժեք է ստանում, այլև դառնում է համազգային մշակույթի անբաժան մաս, թշնամի վայ գիտնականների գառանցանքներին հարվածող հատու զենք: Վերը բերված Բաֆֆու քննումից այս մտահանգմանն ենք գալիս: Բաֆֆին այս մտասերմանը չի հետևել իր մնացած վիպասական գործերը ստեղծելիս, այլ ազատ է եղել իր երեւակայության մեջ. պատմական փաստին մոտեցել է ըստ յուր գաղափարական տիրադի, ազգային գաղափարախոսությանը հարիր ծրագրայնությամբ:

Թե՛ Խորենացին, թե՛ այլ գիտնական պատմիչներ, թե՛ Բաֆֆին՝ հանձին «Խամսայի մեկիքությունների», նպատակադրված գրել են պատմական երկասիրություններ, ուսումնասիրություններ, բայց անպայմանորեն գլխավոր գործոն են ներկայացրել վիպական տարրը՝ ժողովրդի ստեղծած բանավոր աղբյուրները՝ տարբեր ժանրատեսակներով: Եվ որպեսզի խուսափի ժողովրդական ավանդություններում երբեմնակի առկա խառնաշփոթություններից, անցքերը, գործողությունները պատմական ճիշտ ձևի մեջ դասավորելու համար, Բաֆֆին օգտվել է, ինչպես նշել ենք, գրավոր աղբյուրներից, իսկ որտեղ պակասել են գրավոր աղբյուրները, նա հիմնվել է ավանդությունների վրա, որոնք գրողը նույնպես բարձր է գնահատել, ձգտել ճիշտ օգտվել դրանցից:

«Ավանդությունները Խամսայի մեկիքների պատմության ամենահարուստ մասն են կազմում, գրում է վիպասանը: Ավանդությունների հետ ես վարվել եմ նույն կերպով, ինչպես որ վարվում է բնագետը մի հնադարյան անձանոթ կենդանու ոսկորների կույտի հետ»: [1, էջ 379]:

Իբրև հետազոտող, ըստ յուր դիտարկման, Բաֆֆին ընդհանուր կենսաբանական օրենքներով, խառնված ոսկորների կտորները ջոկել է միմյանցից (նրա համար այդ ամենի աղբյուրը պատմության կմախքն է եղել՝ իր լրացուցիչ մասնիկներով), ամեն մի մասը իր պատշաճ տեղը դրել, կազմել մի ամբողջական կմախք. գուցե որոշ մասեր չգտնելով, բայց կազմելով հիմնական կմախքը՝ փորձել է հասնել մեկիքությունների պատմության ու նրա մարմնի մասերի գեղարվեստական ու պատմական քննությանն ու բացահայտմանը, դերակատարների մարդկային վիպապատմական նկարագրերի կերտմանը, հանդես գալով ոչ թե պասիվ հայեցողի, այլ ակտիվ գրողի, ազգային գաղափարախոսի, քննողի եւ դրանց ճիշտ գնահատական տվողի դերում:

Մյուսեւսային ծավալումների մեջ պատմականի եւ վիպականի միաձուլումով, Բաֆֆին շարադրանքում լայն տեղ է հատկացրել ոչ միայն Արցախի մեկիքությունների պատմությանը, արցախահայության նկարագրի տարաբնույթ կողմերի վերհանմանը՝ վիպական հարուստ անդրադարձներով, այլև ստեղծել է հայ-ռուսական, հայ-վրացական, հայ-պարսկական հարաբերությունների ծավալուն նկարագրություններ, բնութագրել պատմական եւ վիպական անձերին՝ կերպավորումների լայն տեսադաշտում, ցույց տվել տարածաշրջանում իրենց գերծրագրերը իրագործելի տեսնող ու դարձնող երկրների գահակալների նպատակառդովածությունները, դրանց առանցքում պտտվող մեկիքությունների ճակատագրի պտուտակների տեղատվություններն ու մակընթացությունները, ստեղծել պատմաքաղաքական, մշակութային միջավայր, շեշտադրել գլխավոր ու երկրորդական եւ անմիաբան պատմավիպական հերոսների զարգացման գաղափարական հետազիծը՝ մինչեւ ազգային խնդիրների արծարծումներ: Թվում է՝ շարադրանքում ոչ մի պտուտակ հենց այնպես չի դրված, այլ ամբողջը համակարգող, փոքր ու մեծ մասնիկներով իրար լրացնող մեխանիզմ է օգտագործված:

Այսպիսով, «Խամսայի մեկիքությունները» գրվածքի մեջ միահյուսված են վիպական ու պատմական, կենսագրական հարուստ տարրերը եւ ժանրային նկարագրով այն **վիպապատմական երկ** պետք է համարել՝ հաստատելով նաև, որ Բաֆֆին, տուրք տալով ժամանակաշրջանի գրականության պահանջին, այն ընդհանրական **իմաստով պատմական ուսումնասիրություն** է անվանում, վիպա պատմական փաստերի օգնությամբ ստեղծված **գրական երկ**:

«Խամսայի մեկիքություններում» Բաֆֆին, մեկնաբանելով օտարամետ՝ ռուսամետ եւ պարսկամետ, եվրոպամետ կոմունորոշում ունեցող մեկիքների մաքառումները պետականության, ինքնիշխանության պահպանման գործում, գալիս է այն եզրակացության, որ բոլորն էլ իրենց ունեն խորքում վտանգավորություն, բայց եւ միայն ռուսական իրավահաջորդ ինքնակալների քաղաքական խաղերի արդյունքում է կործանվում Խամսայի մեկիքությունների պետականության կառույցը, եւ մեկիքներն արդեն ոչ թե իրավահաջորդ էին իրենց տոհմական իրավունքներում, այլ գուտ ինքնակալական պաշտոնյաներ. **մեկիքությունների ինքնիշխանության ողբերգական վախճան**:

Խորանալով ազգային գաղափարախոսության մեկնումներում՝ Բաֆֆին իր ստեղծած արցախցի պատմավիպական հերոսների՝ ներքին մարդու որոնումներում ու բացահայտումներում հանգեց նրանց ազգային գաղափարաբանության շերտերին հետամուտ լինելու, հոգեբանափիլիսոփայական շերտերից ընդհանրացումներ կատարելու, մտային համակարգի ստեղծման գաղափարին:

Նրանք՝ կին թե տղամարդ, պատկերված են իրենց ե՛ւ թերություններով ու առավելություններով, ե՛ւ ուժեղ ու բարի, վսեմ հատկություններով ու մարդկային թուլություններով, ե՛ւ հատկապես քաջության, խիզախության, դպրասիրության, հայրենապաշտության հատկանիշներով:

Պատմությունը ցույց է տալիս, որ անցյալից դասեր առնելով՝ նորից ու ավելի մեծ սրությամբ ժողովուրդը, ավելի շուտ՝ նրա առաջնորդները, երկիրը տանում են ոչ թե անկախացման, հզորացման, այլ տկարացման, ստրկացման, անկման:

Հարցադրումները ժամանակահունչ են, իսկ եզրակացությունները՝ ապարդյուն:

Պետք է կարողանալ պահպանել անկախությունն ու ազատությունը, եւ այդ դժվարագնա ճանապարհին ապավինել միմիայն սեփական ուժերին. դա է ազգի գոյատևման անխուսափելի հրամայականը՝ ժողովուրդների, տվյալ դեպքում՝ հայության ազգաբանության կառուցում:

Ինչքան էլ դաշնակցի մեկնած ձեռքն ուժեղ լինի, ու նա փորձի հովանավորի դեր խաղալ՝ ազնիվ թե անազնիվ նկատառումներով, միեւնույն է, **ազգը պետք է միայն ու միայն ինքը տնօրինի իր ճակատագիրը. այսօր հատկապես դա է հրամայականը, այլընտրանքը հաստատ կրեթի կործանման, դանդաղ մահվան՝ ստրկացնող հետեւանքներով:**

Թշնամին կարողանում է ծիծաղել հայոց թույլ տված սխալների վրա, բայց հազարամյակների պատմություն, մշակույթ, հզոր հանճար ունեցող հայերը դոփում ու կատարում են նույն ազգակործան սխալները:

**Մթափվե ք հայոց ազգ, Արցախա տուն, հայոց իշխանավորներ:**

Իսկ հայ ազգը, Արցախա տունը ներառյալ իրենց վայել սրբություններ, առաքինություններ ունեն՝ անթեղած իրենց հազարամյակների պատմության ծալ-ծալ էջերում ու պարտավոր են դրանք պահպանել:

**Քրքրի ր մի ազգի հնությունները, եւ մի գիշերվա մեջ կգարթնի նրա հոգին.** իմաստունի խոսքն է, որ ուղղված է սերունդներին:

«Խամսայի մեղիքությունների» էջերը լի են հենց այդպիսի հնությունների անդրադարձներով, որոնց արանքից խոսում են մեղիքության ժամանակների արցախահայության հասարակական կյանքի դրվագները. գործող անձինք ոչ միայն պատմավիպական արական սեռն են ներկայացնում՝ աշխարհիկ եւ հոգեւոր առաջնորդներով, այլեւ բազմապիսի առաքինություններով, շնորհներով, հոգեւոր ու ֆիզիկական բարեմասնություններով, առաքելություններով օժտված կանայք, որոնցից շատերն անգամ հանդես են եկել իրենց սեռին ոչ հատուկ կամային ուժեղ որակներով, ազգօգուտ ծրագրերով, պայքարով:

Ազգային ցավերի հանգուցակետերում Բաֆֆին կարելորում է նաեւ արցախցի հայ կնոջ դերը, ոգու նպատակալացությունը, դրսևորած ազգային նրբությունները, ճաշակը, դպրասիրությունը, ազգային ավանդների, ժողովրդական արհեստների, արվեստների տարբեր ճյուղերի շարունակական պահպանումը, թշնամու դեմ կովելու խիզախությունը, հայ կնոջ մեջ հյուսված հոգու եւ մարմնի ներդաշնակ գեղեցկությունը, խոհեմությունը, մայրական գծի հայրենասիրական մղումները, ազատության գաղափարին ձուլվելու ոգեղեն փաստը, զավակներին մարտական-հայրենասիրական-արիական ոգով դաստիարակելու պահանջը:

Բաֆֆին իր ստեղծագործական երեւակայությանն ավելացրել է նաեւ մեղիքությունների պատմության մեջ առկա, կանանց կերպարներին բնութագրական առատ վիպապատմական տարրեր, որոնք իրենց հերթին առանձնահատուկ հմայք են տալիս երկի սյուժեի ընթացքին, վիպական կոլորիտ ստեղծելով, կոմպոզիցիոն հնարքների իրականացման երկու հիմնական դրսևորումներով՝ ամբողջի եւ մասերի հարաբերությամբ:

**Կանանց կերպարների բնութագրման, բնության պատկերների** ստեղծման անդրադարձը Բաֆֆուն հնարավորություն է տվել իր գրելիք նյութի ամբողջական եւ մասնական մասերը միացնել:

Բաֆֆու ստեղծած կերպարների համակարգում առանձնանում են կանանց կերպարները՝ կաղ Աբովի գեղեցկուհի, խելացի կինը՝ Ղամար Սոլթանը, Գյուլիստանի Մելիք Բեզլարյան մելիք Բեզլար

II-ի մայրը՝ բարեսիրտ Հերիքնազը, կինը՝ Մելիք Շահնազար II-ի դուստր հմայիչ ու խանդոտ Ամարնան (Մարիամ), սիրուհին՝ չնաշխարհիկ Բալան, Վարանդայի հզոր իշխան մելիք Հուսեինի կինը՝ խիզախ ու աննահանջ, հայրենասեր Աննա Խաթունը, գեղեցկուհի աղջիկը՝ դպրասեր ու հերոսական, Ավետարանոցի Կուսանաց անապատի հավատավոր-կույսը, լեգենդ դարձած Գայանեն, Փանահի հարեմում գտնվող Ալլահ Դուլի սուլթանի սիրած կինը, Դիզակի մելիք Ավանի քրոջից՝ Սոնա խանումից եւ Մելիք Շահնազար II-ից ծնված մյուս դուստրը՝ գեղեցկուհի Հուրիգաղը, քարինտակցի հերոսական Խաթային (Խաթունը), Մելիք Շահնազար II-ի եւ Իբրահիմի, Մեհտի Դուլիի կանայք, մայրերը, աղջիկները եւ ուրիշներ:

Նրանցից յուրաքանչյուրի մեջ նստած է հզոր ընտանիքի, հայավայել սրբությունների, ավանդույթների պահպանման, բարոյաժողովրդական ներքին ապրումների, զգացմունքների, հանկարծահաս, պոռթկումների անենթակա, անչափելի խորհուրդ, մեծ սիրո, հավատարմության, խանդի, պարկեշտության, վայելումի, հայրենիքի նկատմամբ գրված ու չգրված օրենքների ուժ ստացած զգացողությունների պահպանման ու արարման ուժեղ շարժ: Նրանք՝ արցախցի հերոսածին մայրերը, գեղեցկուհի, հեզանազ աղջիկներն են, սիրո, սեռի, նվիրումի, խանդի պատրաստ դիցուհիները՝ իրենց կենսաստեղծման պորտալարով, ազգության գեղեցիկ սեռի ներկայացուցիչները՝ Եկատերինա Երկրորդ կասրուհին եւ ուրիշներ:

Ամուսնու՝ Գյուլիստանի Մելիք Բեգլարյան մելիք Աբովի (կաղ Աբով) մահից հետո Ղամար Սուլթանը՝ Գանձակի Սամադ խանի դուստրը, կարողանում է որդուն՝ մելիք դաստիարակել՝ ընտանեկան ու հայրենիքի սրբությունները պահպանելու ուխտով: «Մելիք Յուսուբի մայրը,- գրում է Բաֆֆին,- խելացի Ղամար-Սուլթանը, որ իր խորհուրդներով ոչ սակավ Մելիք-Բեգլարյանների տոհմային գերեզմանատանը Հոռեկա վանքի հանդեպ» [1, էջ 174]:

Նշենք, որ Բաֆֆին, Մելիք Բեգլարյան մելիք Աբովի կնոջ անունը գրության երկու տարբերակով է հիշատակում (Ղամարսուլթան- էջ 171, Ղամար-Սուլթան- էջ 174). մենք ընտրել ենք առանց գծիկի՝ «Ղամար Սուլթան» տարբերակը:

Օսմանացիների լծի դեմ պայքարի մի հուզիչ ու հերոսական դրվագ էլ ներկայացնում է 1733 թ. Վարանդայի Ավետարանոց մելիքանիստում՝ Բերդավանում, կատարված հիշատակության արժանի վիպական անցքը: Ըստ նախապես գաղտնի պայմանավորվածության՝ Վարանդայի մելիքության բոլոր գյուղերում տեղակայված օսմանացիներին, համաձայն գաղտնի որոշման, պետք է կոտորեին:

Արցախի մելիքների գահերեցի՝ Դիզակի մելիք Ավանի սարքած դավադրությամբ մի գիշերվա մեջ կոտորվեց Սարը Մուստաֆա փաշայի զորքը՝ տեղակայված Ղարաբաղի մելիքների երկրներում:

Ապստամբության նշանաբանը փոխաբերական իմաստով գործածած հետեւյալ **ասույթն** էր. «պահպանեցեք հին սերմերը, որպես բուսնելու հույս տվողներ և ոչնչացրեք նորը, որ պտուղ չէ խոտանում» [1, էջ 191] դա նշանակում էր՝ խնայել պարսիկներին, ոչնչացնել օսմանացիներին:

Ավետարանոցում Սուլեյման բեկն էր տեղակայված: Վերջինս հմայվելով ահարկու ինքնակալ մելիք Հուսեինի դստեր՝ գեղեցկուհի Գայանեի փայլով, մտածում էր տիրանալ նրան, չհամարձակվելով բռնությամբ օրիորդին սեփականացնել՝ որոշում է ամուսնանալ հետը: Ծնողները տարբեր պատճառաբանություններով հետաձգում էին հարսանիքը:

Ինչպես ամբողջ Վարանդայում, նույնպես Ավետարանոցում, որոշված գիշերը արյունալի խրախճանք տեղի ունեցավ: Ավետարանոցի կոտորածը առաջնորդեց այլ վայրերում գործող մելիք Հուսեինի կինը՝ «քաջասիրտ» (Բաֆֆի) Աննա խաթունը: Այդ գիշեր Գայանեի դաշույնը եւս մահացու խոցեց անպատկառ մահմեդականի՝ զորապետ Սուլեյման բեկի սիրտը: «Կոտորածը պետք է կատարվեր մեծ պասի առաջին գիշերվա մեջ: Այդ բարթոլոմյան գիշերում,- գրում է Բաֆֆին,- հայերը ոչնչացրին թե Ղարաբաղի և թե Գանձակի կողմերում գտնված բոլոր օսմանցի զորքերին: Չմեռվա ցրտի պատճառով զինվորները հայերի տներում էին բնակվում: Ամեն մի տանտեր սպանեց իր ինքնակոչ հյուրին: Սարը-Մուստաֆա փաշան հազիվ կարողացավ ազատվել փախչելով Երևան...» [1, էջ 191]:

Վիպական այդ հրաշակտորը ցույց է տալիս երբեմնի հայրենասիրության կենտրոնատեղիի՝ Ավետարանոց բերդավանի նույնպես առաքինություններով պսակյալ գեղեցիկ սեռի բարոյական բարձր նկարագիրը: Նկատի ունենալով թե՛ Աննա խաթունի, թե՛ Գայանեի, թե՛ քարինտակցի Խաթայու եւ մնացած հայ կանանց անօրինակ նկարագրերը՝ հայրենանվեր Բաֆֆին գրում է. «Դրա մեջ փայլում է հայ կնոջ հերոսականությունը» [1, էջ 191]:

Մեկիք Շահնագարյանների տոհմի առաքինությունների մասին տեղեկություններ են հաղորդում ո՛չ միայն ավանդությունները, ա՛յլև գրչագրերը, բերդի հյուսիսարեւմտյան մասում գտնվող իշխանական գերեզմանոցի տապանաքարերի գրությունները եւ բերդի Կուսանագ անապատի գավթում եղած արձանագրությունները:

Այդ հրաշք գրչագիր Ավետարանի գոյությունը Ավետարանոցի եկեղեցում՝ գրված Գայանեի ձեռքով, խոսում է օրիորդի դպրասիրության, ստացած բարձր ու արիստոկրատիկ դաստիարակության, ունեցած հոգեւոր եւ աշխարհիկ շնորհների, հայրենի ավանդների, մասունքների ու իմացությունների հանդեպ նրա խորը ակնածանքի մասին՝ ո՛չ միայն իբրեւ դրանք պահպանողի, ա՛յլև արարողի ուխտապահությամբ, հայրենի օջախի ու հայրենիքի ազատության խորհրդի գնահատմամբ, շարունակմամբ:

Ջրաբերդի Մեկիք Իսրայելյան Ալլահ Ղուլի սուլթանի եւ Փանահի միջեւ տեղի ունեցած միջադեպի մասին է հյուսված վիպական հաջորդ կտորը, որտեղ հերոսները ներկայացնում են թե՞ արական, թե՞ իգական սեռը:

Փանահ խանին տեսության եկած Նախիջեւանի Շեյդար Կուլի խանը խոնարհվելով առաջինը ողջունեց շքեղ հագնված, գեղեցիկ եւ հսկայատիպ Ջրաբերդի մեկիք Ալլահ Ղուլի սուլթանին՝ շփոթելով Փանահ խանի հետ: Նկատի ունենալով մեկիքի ազդեցիկ արքայական արտաքինը՝ խանին ասում է հետեւյալը՝ մեջբերելով պարսից բանաստեղծ Սասադիի թեւավոր ասույթը. «Տասը դերվիշներ կարող են մի փալասի վրա պառկել, բայց երկու թագավորներ չեն կարող մի աշխարհի մեջ հաշտ ապրել»[1, էջ 209]:

Այս միջադեպը առիթ է հանդիսացել տարբեր երանգներով ժողովրդական այլ պատումների ստեղծման, որը վիպական երանգ է ստացել զրույցներում: Ահա մի օրինակ եւս.

Փանահը, անվերջանալի համարելով մեկիքներից պատուհասվելը, անձար մնալով Արցախի մեկիքների՝ Ալլահ Ղուլի սուլթանի, մեկիք Յուսուբի, մեկիք Եսայու երեսներից, մտածեց հաշտության եզրեր գտնել նրանց հետ: Որպես հաշտության վայր՝ իբրեւ հավատարմացույց Ամարասի վանք ուղարկվեց Ալլահ Ղուլի սուլթանը՝ հանդիպելու Փանահի եւ Մեկիք Շահնագարի հետ: Մի այլ գործով հանդիպման վայր եկավ նաեւ Նախիջեւանի Շեյդար Կուլի խանը:

Տեսնելով խանին վայել հանդերձներով փայլող, գեղեցկատես Ալլահ Ղուլի սուլթանին, թե՛ Շեյդար խանը, թե՛ Մեկիք Շահնագարը Փանահին հասկացրին՝ վաղ թե ուշ Ալլահ Ղուլին կձգտի Շուշիի թագավոր լինել:

Մոռանալով իր բարերարի ցույց տված վերաբերմունքը, Նադիր շահի դահիճների ձեռքից իրեն ազատելը՝ Փանահ խանը Ալլահ Ղուլի սուլթանին՝ իր երբեմնի բարերարին, կալանավորում է Շուշի բերդում եւ մի քանի օրից հրամայում է գլխատել (1756 թ.): Պարսից պատմության մեջ էլ հիշատակված է վիպականությամբ շաղախված այս փաստը:

Բանտում հայտնվելով, Ալլահ Ղուլի սուլթանը իր քաջ եղբորը՝ մեկիք Աթամին, հավատարիմ բարեկամներին, Դալի Մահրասային՝ իր անպարտելի նիզակակցին, երգով օգնության է կանչում, բայց ոչ մեկը չի հայտնվում նրան օգնելու: Նրան օգնության է գալիս միայն սիրող կինը, ով Փանահ խանի հարեմի ամենագեղեցիկն էր: Գիշերը փլավի սկուտեղի մատուցարանի մեջ թաքցնում է բանտի եւ մեկիքի ոտնակապերի բանալիները, որ նա բաց անի, փախչի կալանքից: Հսկայամարմին հերոսը պատասխանում է, որ քաջերը փախչելու սովոր չեն: Ձորավոր ձեռքերով փշրում է իր շղթաները, կտորտանքները լցնում մատուցարանի մեջ, հետ ուղարկում, ասելով, թե դավաճանությունը կպատժվի... Իր արյունը առանց վրեժխնդրության չի մնա:

Շարադրանքից երեւում է, թե որքան հեռու էր գնացել օտար տիրապետողը, որ իրեն թույլ է տալիս ո՛չ միայն իր հարեմը լցնել հայ գեղեցկուհիներով, տիրանալ մեկիքների պատկանելիքին, ա՛յլև բռնի կերպով հայ կանանց՝ մանկահասակներին եւս: Նման օրինակները շատ են Բաքոյի մոտ (Վարդ խաթուն եւ ուրիշներ):

Գյուլիստանի մեկիք Յուսուբի ու նրա որդու՝ մեկիք Բեգլար II-ի անհնազանդության մասին՝ դեպի Փանահ խան, այլ նկարագրություն ունի Պլ. Ջուրովի «Լարաբադի աստղագետը» վեպը, որտեղ մեկիք Հովսեփը անվանված է Գյուլիստանի մեկիք, որդին՝ մեկիք Հուսեին, ով իր կերպարային որակներին հարիր թե՞ քաջ է, թե՞ դյուրաբորբոք, թե՞ թշնամուն անհանդուրժող, ազատասեր ու, մանավանդ անմնացորդ հայրենասեր :

Ինչպես նշել ենք, Բաքոյի մոտ մեկիք Յուսուբի որդին՝ մեկիք Բեգլար II-ը գոռոզ, դյուրաբորբոք երիտասարդ է, ամուսնացած Մեկիք Շահնագարի դստեր Ամարնայի (Մարիամի) հետ:

Գեղարվեստական վառ գույներով է Ռաֆֆին պատկերում մելիք Բեգլար II-ի ու Բալայի սիրավեպը, որին խանդի հողի վրա խեղդել է տալիս Ամարնան, ինչպես նշել ենք, ամուսնու երկյուղից կրկնակի հանցանք կատարելով՝ զգեստափոխված հրացանազարկ տալով ամուսնուն: Այս մասին անդրադարձ ենք կատարել մելիք Բեգլար II-ի կերպարի վերլուծության ժամանակ: Կանանց կերպարների մեկնության հարցում ավելացնենք, որ Ամարնան, հոր անհանգիստ, անհանդուրժող, ռիսակալ խառնվածքն ունենալով, գրքում ներկայանում է սիրող ու վրեժխնդիր կնոջ կերպարային գծերով, այն դեպքում, երբ իր հայրը հարեմ էր դարձրել իր տունը՝ անբարո կյանք վարելով, իսկ քրոջը՝ գեղեցիկ Հուրիզադին, կնության տալով Հայոց ամենառիսխիմ թշնամիներից մեկին՝ Իբրահիմ խանին:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Եժ, տաար հատորով, տասներորդ հատոր, Եր., 1959:

### РЕЗЮМЕ

#### Система образов произведения Раффи «Меликства Хамсы» Зинаида Балаян

**Ключевые слова:** 18-19 вв., А. Арпиарян, «Меликства Хамсы», армянский автор, Раффи, талантливый историк, романист, Мовсес Хоренаци, победа, война, национальная идеология.

Исследование, на наш взгляд, ценно новой мыслью в арменоведении и арцаховедении, так как, как и «История Армении» Мовсеса Хоренаци, так и исторические исследования «Меликства Хамсы» Раффи для армянского народа и для армян Арцаха особенно, получают большую учебно-научную, историческую, литературную значимость.

По-новому исследуя работу, мы подвергли ее переоценке, учитывая идеологическую направленность данной работы Раффи и отмечая политические причины распада Меликств Хамсы.

### SUMMARY

#### The System of Images in Raffi's «The Melikates of Khamsa» Zinaida Balayan

**Key words:** 18-19<sup>th</sup> cent, A. Arpiaryan, «the Melikates of Khamsa», Armenian author, Raffi, talented historian, novelist, Movses Khorenatsi, victory, war, national ideology.

The importance of the goal of our research is the specific expression of Armenological study, since Raffi's «the Melikates of Khamsa», like «Armenian History» of our venerable historian Movses Khorenatsi, acquires immense literary, historical, scientific and classical value for Armenian people and the Armenians of Artsakh.

The study now focuses on the ideological orientation of Raffi's work, pointing to the political causes of the decline of melikdoms of Khamsa.